ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1410-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 696-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 696-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

1) ստեղծել նոր՝ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին.

2) ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության

վարչությունից առանձնացման ձևով ստեղծել ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, իսկ ռիսկերի գնահատման, վերլուծության և վերահսկողության վարչությունն անվանափոխել ռիսկերի գնահատման և վերլուծության վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման:

2. Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող կարգապահական և ներքին հսկողության բաժինն անվանափոխել ներքին անվտանգության և հսկողության բաժնի:

3. Այդ կապակցությամբ որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ և 25-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«24. Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) տնտեսական ոլորտի վերահսկողության վարչություն.

2) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչություն.

3) սոցիալական ոլորտի վերահսկողության վարչություն.

4) պետահիրավական ոլորտի վերահսկողության վարչություն.

5) գնումների գործընթացների վերահսկողության վարչություն.

6) ռիսկերի գնահատման և վերլուծության վարչություն.

7) դիմումների և քաղաքացիների ընդունելության բաժին.

8) ներքին անվտանգության և հսկողության բաժին.

9) ներքին աուդիտի բաժին.

10) իրավական ապահովման և օրինականության վերահսկողության վարչություն.

11) ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչություն:

25. Ծառայությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժին.

2) հաշվապահական հաշվառման բաժին.

3) անձնակազմի կառավարման բաժին.

4) ընդհանուր բաժին.

5) առաջին բաժին.

6) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ